ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2016 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.451-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Սիսակյան փողոցի հ.16 շենքի հ.35՝ 62.7 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.2311215-01-0199 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մկրտիչ Մկրտչյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Սիսակյան փողոցի հ.16 շենքի հ.35՝ 62.7 քմ մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) երգիչ, ՀՀ վաստակավոր արտիստ՝ Մկրտիչ Մկրտչյանին։

Մկրտիչ Մկրտչյանը ծնվել է 1962 թվականին Թալինի շրջանի Սասնաշեն գյուղում և դպրոցական տարիներին սկսել է երգել հայրենասիրական, ազգագրական երգեր։ Սովորել է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի երգեցողության բաժնում, այնուհետև՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում։ Վերջինս 1990 թվականից կամավոր անդամագրվել է արցախյան շարժմանը՝ ակտիվ մասնակցություն ունենալով Հայաստանի և Արցախի սահմաններում մղվող ռազմական գործողություններին, սկզբում Թաթուլ Կրպեյանի ջոկատում, այնուհետև ԼՂՀ ինքնապաշտպանության բանակի Շուշիի առանձնակի գումարտակի կազմում, որտեղից 1997 թվականին զորացրվել է՝ ստանալով ավագ ենթասպայի կոչում։

Նա այն բացառիկ նվիրյալներից է, ով ամեն տարի Հայաստանում և Արցախում հանդես է գալիս համերգներով՝ ազգագրական երգի գաղափարները տարածելով հայ երիտասարդների շրջանում, նրանց մեջ սերմանելով բարոյական, հայրենասիրական ոգի, ինչը կարևորագույն դեր և նշանակություն ունի ազգային գաղափարախոսության պահպանման և զարգացման գործում։

Մկրտիչ Մկիրտչյանը իր գործունեության ընթացքում պարգևատրվել է բազմաթիվ մեդալներով, այդ թվում «Արիության համար», «Դրաստամատ Կանայան», «Ծովակալ Հ.Ս. Իսակով», «ՀՀ զինված ուժերի 20-ամյակ», ՀՀ Նախագահի կողմից պարգևատրվել է «Մարտական ծառայության», իսկ ԼՂՀ Նախագահի կողմից «Երախտագիտություն» մեդալներով։

Մկրտիչ Մկրտչյանը 5 երեխաների հայր է, ապրում է Արագածոտնի մարզի, Սասունիկ համայնքի 17-րդ փողոցի հ.18 շենքի հ.2 բնակարանում, բնակության համար ոչ պիտանի պայմաններում և, ցավոք, ունի բնակարանային պայմանների խիստ կարիքավորություն։

Հաշվի առնելով նրա դերը հայ ազգագրական երգի տարածման գործում, ինչպես նաև բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտությունը Երևանում, ստեղծագործելու համար պայմաններ ապահովելու նպատակով մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ